ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2023 թվականի N 1867 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՆՏԵՍԱՊԵՍ ԲԱՐԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արդյունաբերական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում տնտեսապես բարդ ապրանքների արտադրությանն ուղղված ներդրումային ծրագրեր իրականացնող առևտրային ընկերություններին պետական աջակցության տրամադրման ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն սույն որոշման հետևյալ հավելվածների՝

1) ներդրումային ծրագրերին, դրանց հայեցակարգերին և առևտրային ընկերություններին ներկայացվող պահանջները, ներդրումային ծրագրերի գնահատման չափորոշիչները, մեթոդաբանությունը և կարգը՝ ըստ N 1 հավելվածի.

2) ծրագրի շահառու ճանաչվելու և աջակցության տրամադրման կարգը՝ ըստ N 2 հավելվածի.

3) աջակցության չափը սահմանելու կարգը՝ ըստ N 3 հավելվածի.

4) շահառու ճանաչվելու համար հայտի ձևը և կից փաստաթղթերի ցանկը՝ ըստ N 4 հավելվածի.

5) աջակցություն ստանալու դիմումի ձևը և կից փաստաթղթերի ցանկը՝ ըստ N 5 հավելվածի:

2. Սահմանել, որ ծրագրի շրջանակներում աջակցություն են ստանում սույն որոշման N 1 հավելվածով սահմանված չափանիշներին համապատասխանող ներդրումային ծրագրեր իրականացնող առևտրային ընկերությունները:

3. Սահմանել, որ սույն որոշման իրականացման պատասխանատու մարմինն է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատվում են ներդրումային պայմանագրի օրինակելի ձևը և ներդրումային պայմանագրերի ռեեստրի վարման կարգը:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատվում է 2024 թվականի համար տնտեսապես բարդ ապրանքների ցանկը (այսուհետ՝ ցանկ): Սույն որոշումն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա մինչև սեպտեմբերի 30-ը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատվում է հաջորդ տարվա ցանկը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ